ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ17/1-1-2-53-17

ք. Երևան «27» «07» 2017թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Շահնազարյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և **«Ռեաքիմ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Մ.Թագեսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված **տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **829996**/ ութ հարյուր քսանինը հազար ինը հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի

օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Ռեաքիմ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
Հ/Հ՝ 900013010013	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ՝1570025800310100 ,
գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 01239302
ՀՎՀՀ՝ 02505983	
Ա.Շահնազարյան	**Մ.Թագեսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20 17 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

<< >>

ՀՀ ՏՉՆՆ ԳՀԱՊՁԲ- 17/1-1-2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դաս. (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտա-դրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	31531300	տնտեսող լամպեր Liside	ՉԺՀ Liside	Սպիրալաձև, 36 Վտ հզորության, կոթառը E 27 տիպի, 220Վ լարման, 50 հերց հաճախականության, գործարանային փաթեթավորմամբ, դեղին լուսավորությամբ:	հատ	750	97500	**130**	Մ.Մկրտչյան 5	**130**	IV-րդ եռամսյակ
3	31531100	էլեկտրական լամպեր Калашников	Ռուսատանի դաշնություն Калашников	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 60 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը փոքր E:	հատ	93.6	46800	**500**	Մ.Մկրտչյան 5	**500**	IV-րդ եռամսյակ
13	31685000	էլեկտրական երկարացման լար ZORRO	ՉԺՀ ZORRO	Չափսը՝ 5տ, 3մ, 16Ա, 250Վ, եռաոտ բնիկով, միացման մանրակներով, ամուր լարով, ընդհանուր անջատման	հատ	1943	29145	**15**	Մ.Մկրտչյան 5	**15**	IV-րդ եռամսյակ

				հնարավորությամբ:							
14	31685000	էլեկտրական երկարացման լար Protector	ՁԺՀ Protector	Չափսը՝ 5տ, 5մ, 16Ա, 250Վ, միացման մանրակներով, ընդհանուր անջատման հնարավորությամբ, ամուր լարով:	հատ	2450	36750	15	Մ.Մկրտչյան 5	15	IV-րդ եռամսյակ
15	31685000	էլեկտրական երկարացման լար Protector	ՁԺՀ Protector	Երկարիչ վեց բնանի, ընդհանուր անջատման հնարավորությամբ, 3մ, ամուր լարով, 16Ա, 250Վ:	հատ	4025	80500	20	Մ.Մկրտչյան 5	20	IV-րդ եռամսյակ
16	31686000	խրոց սովորական FAR	ՁԺՀ FAR	Խրոց սովորական, էլեկտրական խրոց 6,3/10Ա, 250 Վ:	հատ	162	8100	50	Մ.Մկրտչյան 5	50	IV-րդ եռամսյակ
21	44521200	կողպեքների մասեր Rutia	ՁԺՀ Rutia	Եվրոդռների ներդրովի փականի միջուկ բանալիներով, երկարությունը՝ 9սմ:	հատ	2375	23750	10	Մ.Մկրտչյան 5	10	IV-րդ եռամսյակ
24	39812600	մաքրող մածուկներ և փոշիներ Gold Drop	Թուրքիա Gold Drop	Մաքրող միջոց լամինատե մակերեսների համար, փաթեթավորված պոլիմերային տարայում 1լ զանգվածով:	հատ	956.6	28698	30	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	30	IV-րդ եռամսյակ
26	39831280	ապակի մաքրման միջոց Malvina	Հայաստան Malvina	Լվացման միջոցներ ապակիները մաքրելու համար, չափածրարված 0,5 կգ զանգվածով:	լիտր	900	13500	15	Մ.Մկրտչյան 5	15	IV-րդ եռամսյակ
27	24451140	ախտահանիչ նյութեր Sinus	Հայաստան Sinus	Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ /ժավել/, ակտիվ քլորի պարունակությունը 120 կգ/մ³ 5լ տարաներով:	լիտր	286.6	8598	30	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	30	IV-րդ եռամսյակ
28	39831245	օճառ, հեղուկ Sinus	Հայաստան Sinus	Հեղուկ օճառ հոտավետ 5լ տարաներով, մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում	լիտր	225	49500	220	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	220	IV-րդ եռամսյակ

				չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5 %-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ3-ից:							
29	39812410	կահույքի փայլեցման միջոց Polo	Թուրքիա Polo	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով:	հատ	500	15000	**30**	Մ.Մկրտչյան 5	**30**	IV-րդ եռամսյակ
30	33761000	զուգարանի թուղթ, ռուլոնով Pap Yrus	Հայաստան Pap Yrus	Առանձնահատկությունները՝ եռաշերտ, 9.8սմx24սմ, 164 թերթիկ, երկ 20,5մ սպիտակ, բաղադրությունը՝ 100% բջջանյութ:	հատ	180	251820	**1399**	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	**1399**	IV-րդ եռամսյակ
31	33761400	թղթե անձեռոցիկներ Pap Yrus	Հայաստան Pap Yrus	Անձեռոցիկ սեղանի՝ եռաշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 150 հատանոց տուփերով, չափը՝ 16.5x6x11.5սմ, փափուկ թղթից:	հատ	625	62500	**100**	Մ.Մկրտչյան 5	**100**	IV-րդ եռամսյակ
32	18421130	ձեռնոցներ Yang-Yong	ՉԺՀ Yang-Yong	Ձեռնոցներ ռետինից N2, N3 (XL չափի), հաստությունը՝ 06-0.9մմ, 100% բնական լատեքսից:	հատ	156	10140	**65**	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	**65**	IV-րդ եռամսյակ
33	39836000	ավել սովորական	Հայաստան	Սենյակի հատակը մաքրելու համար, բարձր որակի, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ:	հատ	747	12699	**17**	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	**17**	IV-րդ եռամսյակ
34	39831283	հատակի լվացման լաթ Amigo	Թուրքիա Amigo	Հատակի մաքրման շոր, բամբակյա գործվածքից, չափը՝ 80x100 սմ:	հատ	600	9000	**15**	Մ.Մկրտչյան 5	**15**	IV-րդ եռամսյակ
35	39831283	հատակի լվացման լաթ Amigo	Թուրքիա Amigo	Հատակի մաքրման շոր, բամբակյա գործվածքից, չափը՝ 50x80 սմ:	հատ	436.6	26196	**60**	Մ.Մկրտչյան 5 Կառավարական տուն 3	**60**	IV-րդ եռամսյակ

36	39831281	ապակի մաքրման լաթ Eurohoys	ՉԺՀ Eurohoys	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, չափսը՝ 60x40սմ:	հատ	396	19800	**50**	Մ.Մկրտչյան 5	**50**	IV-րդ եռամսյակ

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

/**Ա.Շահնազարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Ռեաքիմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝1570025800310100 ,
ՀՎՀՀ՝ 01239302

Մ.Թագեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

<< >>

ՀՀ ՏՀՆՆ ԳՀԱՊՁԲ- 17/1-1-2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տնտես. դաս	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31531300	4267	տնտեսող լամպեր	-	-	-	-	-	-	-	-	-	97500	97500	97500	97500
3	31531100	4267	էլեկտրական լամպեր	-	-	-	-	-	-	-	-	-	46800	46800	46800	46800
13	31685000	4267	էլեկտրական երկարացման լար	-	-	-	-	-	-	-	-	-	29145	29145	29145	29145
14	31685000	4267	էլեկտրական երկարացման լար	-	-	-	-	-	-	-	-	-	36750	36750	36750	36750
15	31685000	4267	էլեկտրական երկարացման լար	-	-	-	-	-	-	-	-	-	80500	80500	80500	80500
16	31686000	4267	խրոց սովորական	-	-	-	-	-	-	-	-	-	8100	8100	8100	8100
21	44521200	4267	կողպեքների մասեր	-	-	-	-	-	-	-	-	-	23750	23750	23750	23750
24	39812600	4267	մաքրող մածուկներ և փոշիներ	-	-	-	-	-	-	-	-	-	28698	28698	28698	28698
26	39831280	4267	ապակի մաքրման միջոց	-	-	-	-	-	-	-	-	-	13500	13500	13500	13500
27	24451140	4267	ախտահանիչ նյութեր	-	-	-	-	-	-	-	-	-	8598	8598	8598	8598
28	39831245	4267	օճառ, հեղուկ	-	-	-	-	-	-	-	-	-	49500	49500	49500	49500
29	39812410	4267	կահույքի փայլեցման	-	-	-	-	-	-	-	-	-	15000	15000	15000	15000

			միջոց													
30	33761000	4267	զուգարանի թուղթ, ռոլոնով	-	-	-	-	-	-	-	-	-	251820	251820	251820	251820
31	33761400	4267	թղթե անձեռոցիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	62500	62500	62500	62500
32	18421130	4267	ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	10140	10140	10140	10140
33	39836000	4267	ավել սովորական	-	-	-	-	-	-	-	-	-	12699	12699	12699	12699
34	39831283	4267	հատակի լվացման լաթ	-	-	-	-	-	-	-	-	-	9000	9000	9000	9000
35	39831283	4267	հատակի լվացման լաթ	-	-	-	-	-	-	-	-	-	26196	26196	26196	26196
36	39831281	4267	ապակի մաքրման լաթ	-	-	-	-	-	-	-	-	-	19800	19800	19800	19800
ԸՆԴԱՄԵՆԸ				-	-	-	-	-	-	-	-	-	**829996**	**829996**	**829996**	**829996**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՎՀՀ՝ 900013010013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀԿՀՀ՝ 02505983

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Ռեաքիմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արզումանյան 19/67,
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝1570025800310100 ,
ՀԿՀՀ՝ 01239302

Մ.Թագեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

<< >>

ՀՀ ՏՀՆՆ ԳՀԱՊՁԲ-17/1-1-2

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

<< >>
ՀՀ ՏՋՆՆ ԳՀԱՊՁԲ- 17/1-2

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն